



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Անք - Գարի - Խմբագրության քարտ:



~~354 / 405թ.~~

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ի. Գ. ԲԵԼՕԿՕՆՍԿԻ

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՁԵՄՍՏՎՈ

354
K-43

Թարգ. Յ. Թադևոսյանց

Հասցեն Երևանի քաղաքում
№ 2 «Գ Ո Ր Թ Ի» № 2

1 MAR 2010

354 04 MAR 2013

F-43

Հրատարակչության «Գործի».

300

1172-65

Ի. Պ. ԲԵՆԿՅԱՆ

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

Զ Ե Մ Ս Տ Վ Օ:

1003
21500

Թարգ. ուսերէնից Յովսէփ Թաղեանանց:



Տ Փ Խ Ի Ս

1905


Տպարան Մովսէս Վարդանեանցի.

Тип. М. Вартамянца, Гановск. ул. д. № 3.

40. 278

4 MAR 1905

Доз. Цензурою, 19 Августа 1905 г. г. Тифлисъ.



ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԵՄՍՏՎՈ:

Ուղիղ քառասուն տարի է անցել այն օրից, ինչ մտցրուած է Ռուսաստանում գեմատօն, սակայն ամբողջ ազգաբնակչութիւնը պարզ չէ գիտակցում դրա նշանակութիւնը:

Այս երևոյթը գեմատօնի հակառակորդները բացատրում են նրանով, որ իբր թէ ոռւս ժողովուրդը օժտուած է մի ինչ որ ուրոյն յատկութիւններով, որոնց շնորհիւ նա ինքնավարութիւնն ո՛չ ցանկացել է և ո՛չ էլ երբ և իցէ կը ցանկանայ: Ուրիշները պնդում են, որ մեր ժողովուրդը դեռ ևս այնքան չէ հասունացել, որպէս զի հասկանայ գեմատօնին հիմնարկութիւնները:

Սակայն ո՛չ առաջին ենթադրութիւնն է ճիշտ և ո՛չ էլ երկրորդը:

Ազգաբնակչութիւնը բաւականաչափ ծանօթ չէ գեմատօնի հետ և դա բացատրվում է զլիսաւորպէս նրա անբաւարար կազմակեր-

պութեամբ, որի շնորհիւ ինքնավարութեան մասնակցում է ժողովրդի ամենամանջան մասը, մինչդեռ նրա հոծ մեծամասնութիւնը այնքան հեռաւոր առնչութիւն ունի գեմատւոյի հետ, որ բնականաբար չէ կարող իւրացնել նրա էութիւնը:

Մրա վերաբերմամբ մենք կը համոզուենք փաստերի հիման վրայ, որոնց մասին մենք յետոյ կը խօսենք, իսկ այժմ ծանօթանանք գեմատւային հիմնարկութիւնների հետ:

Բայց ռուսական գեմատւոյից առաջ մենք կը խօսենք այն ժողովուրդների գեմատւային հիմնարկութիւնների մասին, որոնք մեզնից առաջ վարժուել են ինքնավարութեան ու տուել են մեզ նրա օրինակները:

Հեռաւոր ժամանակներում մարդիկ, երբ դեռ խարխափում էին մթութեան ու սգիտութեան մէջ, գտնւում էին իրանց իշխանաւորների լիակատար հպատակութեան տակ: Վերջիններս անում էին այն, ինչ ուզում էին առանց որևէ խոչընդոտի հանդիպելու: Նրանք ժողովում էին ամեն տեսակ հարկեր, ստիպում էին ժողովրդին ձրի աշխատել, այսինքն վճարել ամեն կարգի ծանր բերքի տուրքեր, և ոչ ոք չ'գիտէր, թէ ո՞ւր են գնում ժողովրդի աշխատանքի փողերը կամ ինչի՞ և ո՞ւմ համար է կատարւում այս կամ այն աշխատանքը:

Այսպէս էր իրերի դրութիւնը ամբողջ դարերի ընթացքում, այսպէս է մինչև այժմ և Ասիայի ու Աֆրիկայի մեծ մասում:

Ինչ վերաբերում է Եւրոպային, այստեղ, բացի թիւրքայից, այլ ևս չկայ մի պետութիւն, որտեղ ժողովուրդը կուրօրէն հպատակուէր իշխանութեան և չը հետաքրքրուէր բոլորովին, թէ ինչպէս է՞ այդ իշխանութիւնը նրան կառավարում ու ինչպէս է՞ վարում ժողովրդական անտեսութիւնը:

Եւրոպայում գեմատւօն կամ ինքնավարութիւնը ամենից առաջ Անգլիայումն է ծագել:

Անգլիացիների մօտ դեռ հեռաւոր ժամանակներից ի վեր բոլոր տուրքերը, թէ բերքով, թէ դրամով ժողովում էին ըստ կայքի արդիւնաւէտութեան՝ ո՞վ աւելի հարուստ էր ու գօրեղ, նա վճարում էր աւելի շատ փող, նրա վրայ էր ընկնում հասարակական աշխատանքների աւելի մեծ բաժինը, իսկ ո՞վ չքաւոր էր ու թոյլ, նա վճարում էր քիչ, տալիս էր աւելի նուազ չափով բերքի տուրքեր:

Այս բոլոր դրամական ու բերքի տուրքերի բաշխման մասնակցում էին բոլոր հարկատուները՝ թէ ազնուականները և թէ գիւղացիք, թէ բանւորները և թէ հոգևորականները:

Սրանք բոլորը միասին ժողովվում էին ու խորհրդակցում, թէ նրանցից ամեն մէկը ո՞րքան տուրք պիտի վճարէ թէ դրամով և թէ բերքով:

Տեղական գործերի վճիռներին մասնակցողները անպայման պիտի սեպհականատէրեր լինէին, հակառակ դէպքում զրկվում էին այդ իրաւունքից:

Այդ ժամանակները, երբ Անգլիայում դեռ գոյութիւն ունէին բազմաթիւ մանր սեպհականատէրեր, ամբողջ երկիրը բաժանուած էր տասնեակների, հարիւրակների ու շրջանների (о́круги), համապատասխան այն տների թւին, որոնք կատարում էին զինւորական ծառայութիւնը: Այնուհետև հողը մանր սեպհականատէրերի ձեռքից սկսեց անցնել խոշոր հողատէրերին և այդպիսով առաջ եկան բազմաթիւ հողագուրկներ: Այդ ժամանակ, որպէս զի պահպանուած լինի ժողովրդի իրաւունքը վարել տեղական գործերը, բնակիչները սկսեցին եկեղեցական ծխերի բաժանուել. իւրաքանչիւր բնակիչ, որ պատկանում էր այս կամ այն ծխին ու տալիս էր մի որոշ գումար յօգուտ այդ եկեղեցու և նրա սպասաւորների, լիակատար իրաւունք էր ստանում մասնակցելու իր ծխի բոլոր գործերին: Միևնոյն ժամանակ նա կարող էր պատկանել

ամեն տեսակ դաւանանքի՝ կաթոլիկ, լութերական, անգլիկանական, հրէական, մասնահոական. ինչ դաւանանքի էլ պատկանելիս լինէին, ամենքը պարտաւոր էին մասնակցել եկեղեցական ծախքերին ու ծխական գործավարութեան:

Թէև բնակիչները ոչ միայն եկեղեցական կարիքների համար էին վճարում ամենտեսակ հարկեր ու տուրքեր, բայց այնուամենայնիւ սկզբներում ծխականները ընտրում էին միայն եկեղեցական երեսփոխներ և բաժանում էին միմեանց մէջ հարկերը, իսկ ժամանակի ընթացքում սկսեցին վարել տեղական անտեսութեան նաև ուրիշ ճիւղերը՝ ճանապարհները, ապաստարանները ու ոստիկանութիւնը:

Այս ձևով փոքր գեմատվային ինքնավարութիւնը տևեց երկար ժամանակ: Սակայն հետզհետէ նա բոլորովին փոխեց իր բնաւորութիւնը և վերջ ի վերջոյ վերացաւ:

Ամենից առաջ բոլոր ծխականների ժողովը տեղի տուեց անուանի մարդկանց ու խոշոր հողատէրերի համախմբումներին, որոնցից և սկսեցին սովորաբար ընտրել եկեղեցական երեսփոխներ ու աղքատների հոգաբարձուներ: Հէնց սրանք էլ ոչ միայն վրձուում էին բոլոր գործերը, այլ և փոքր առ փոքր իրաւունք ձեռք բերին իրանց միջից

էլ նոր անդամներ ընտրելու, և այդպիսով նրանք վերջնականապէս գատուեցին միւս ծխականներէց:

Բայց դրանով գործը չը վերջացաւ:

Անգլիայում շատ հին ժամանակներից սկսած հաշտարար դատաւորները ընտրվում էին խոշոր հողատէրերի միջից: Սկզբում սրանք զբաղվում էին լոկ դատաստանական գործերով, բայց յետոյ օրէնսդրական կարգով նրանց ձեռքն անցան բոլոր տեղական գործերը առանց բացառութեան, միևնոյն ժամանակ և զեմսովոյի պաշտօնեաներին նշանակելու իրաւունքը, ինչպէս՝ ոստիկանական ծառայողներին, աղքատների հոգաբարձուներին, ճանապարհների հսկիչներին և այլն:

Հարկ կայ, արդեօք, ասելու, որ այդպիսի պայմաններում ծխական գեմսովօն կորցրեց իր բոլոր նշանակութիւնը. ո՞վ կուզենար հարկեր վճարել, տուրքեր տալ և միևնոյն ժամանակ չը մասնակցել տեղական կարիքների մասին խորհրդակցութիւններին և կամ մասնակցել, օգտվելով խղճուկ ու չնչին իրաւունքներով:

Անգլիական վիճակներում (графство), որոնք համապատասխանում են մեր նահանգներին, նոյնպէս բոլոր գործերը վարում էին հաշտարար դատաւորները համա-

գումարները (сѣбѣды):

Այսպէս, ուրեմն, անգլիական ինքնավարութիւնը, որ գոյութիւն ունէր մի քանի դարեր շարունակ, 18-դ դարի վերջին ժողովրդի ձեռքից անցաւ խոշոր հողատէրերին ու նրանց միջից նշանակուող հաշտարար դատաւորներին:

Սրանք նշանակում էին բոլոր տեղական հիմնարկութիւնների պաշտօնեաներին, կազմում էին եկամտի ու ծախքի նախահաշիւները, տուրքերի բաշխումը, հետևում էին բոլոր գեմսովային տուրքերի գործադրութեան, վերաքննում էին բոլոր կայքերը, հսկում էին բանտերի ու ճանապարհների շինութիւններին, քննում էին գեմսովային հարկերի բաշխման առթիւ ծագած բողոքները:

Տարէնը չորս անգամ որոշեալ ժամանակ Անգլիայի իւրաքանչիւր վիճակի հաշտարար դատաւորները ժողովվում էին և իրանց շէրիֆի (նահանգապետի) նախագահութեամբ վճռում բոլոր տեղական գործերը:

Այս համագումարներին, բացի դատաւորներից, մասնակցում էին և պաշտօնատար անձինք, ինչպէս քննիչներ, բանտերի ու բանւորական տների վերահսկիչներ, ոստիկաններ, երդուեալ դատաւորներ և այլն:

Բայց սրանք չունէին ձայնի իրաւունք, այլ միայն տալիս էին դատաւորներին ամենտեսակ անհրաժեշտ տեղեկութիւններ: Ազգիական ժողովուրդը, ի հարկէ, խիստ դժգոհ էր այդ կարգերից: Նա չէր մոռանում իր կորցրած ինքնավարական իրաւունքները և ամեն կողմից տրտուջներ էին լսվում հաշտարար դատաւորների ու կալուածատէրերի դէմ, որոնք առանց ժողովրդի մասնակցութեան կամայաբար վարում էին տեղական տնտեսութիւնը:

Անգլիացիները սպասում էին միայն յարմար ընդէի, որպէս զի թօթափեն իրանցից հարուստ ու անուանի հողատէրերի լուծը, և այդ մօմէնտը հասաւ 1789 թ.:

Այդ ժամանակ զարթնեց Ֆրանսիական ժողովուրդը և իր արթնանալովը ցնցեց ամբողջ աշխարհը: Նա խորտակեց ստրկութեան շղթան, որի մէջ գտնվում էր ամբողջ դարերի ընթացքում, և նրա ազատութեան կոչին ձայնակցեցին բոլոր ժողովուրդները, որոնց մէջ դեռ չէր մարել մարդկային արժանաւորութեան զգացմունքը:

Անգլիացիք, իբրև Ֆրանսիացիների հաւրաններ, առաջինը ձայնակցեցին Ֆրանսիական յեղափոխութեան: Անտարակոյս, նրանք ոյժով ձեռք կը բերէին իրանց իրաւունքները, բայց անգլիացի ազնուակա-

նութիւնը բանը մինչև այդտեղ չը հասցրեց. տեսնելով ժողովրդական մասսաների յուզմունքը, նա ինքը սկսեց զիջումներ անել ու այդպիսով առաջն առաւ այն սարսափելի կուլի, որը տեղի ունեցաւ Փրանսիայում: Այս զիջումները անվում էին աստիճանաբար և ֆրանսիական յեղափոխութիւնից միայն 45 տարի անցած, այն է 1834 թ. Անգլիայում հաստատուեց լայն ինքնավարութիւն:

Ճիշտն ասած անգլիացիք ո՛չ մի նոր բան չէին մտցնում, այլ միայն վերադարձրին ու լայնացրին այն ինքնավարութիւնը, որը նրանց ձեռքին էր մինչև իշխանութեան հաշտարար դատաւորներին անցնելը:

Գործը սկսուեց դարձեալ ծխից:

Բայց որովհետև ծխերը այլ ևս չէին համապատասխանում ժամանակի հասունացած պահանջներին, այդ պատճառով էլ իրաւունք էր տրուած, որ ծխերը ըստ իրանց ցանկութեան միանային ու կազմէին առանձին ինքնավար շրջաններ:

Այս շրջաններում բոլոր հարկատու բնակիչները հանդիսանում էին տեղական ինքնավարութեան լիազօր կարգադրիչներ, ինչպէս առաջ հաշտարար դատաւորներն էին:

Ժողովուրդով միասին, նրանք ընտրում

էին իրանց միջից մի քանի հոգի, որոնք գործադրում էին շրջանային ժողովների բոլոր վճիռները:

Այս մի քանի ընտրուածները մի փոքր յիշեցնում էին, ինչպէս մենք յետոյ կը տեսնենք, մեր գեմատվոյի ուպրաւանները, բայց միևնոյն ժամանակ և բաւական տարբերվում էին նրանցից:

Նախ և առաջ մեր գեմատվոյի ուպրաւանների նախագահները ու անդամները ստանում են ոտճիկ, իսկ անգլիականները ծառայում էին անվարձ: Բացի այդ անգլիական ուպրաւանների անդամները մերոնց հման ներկայ չէին լինում ամեն օր, այլ հաւաքվում էին ամիսը կամ շաբաթը մի անգամ որոշած ժամանակին: Նրանք ըննում էին բոլոր գործերը, կայացնում էին վճիռներ, որոնց գործադրում էին ուպրաւայի վարձու ծառայողները, ինչպէս են՝ հաշւապահները, գործաւարները, գանձապահները, հարկահանները, ինժեներները, ժողովրդական առողջութեան հոգաբարձուները, ճանապարհների հսկիչները և այլն:

Այսպէս, ուրեմն, Անգլիայում գեմատվոյի անմիջական աշխատաւորները վարձու ծառայողներն էին.

Ինչ վերաբերում է հաշտարար դատաւորներին, որոնք թէև գեմատվային գոր-

ծերին անմիջապէս չէին մասնակցում, այնուամենայնիւ վայելում էին մեծ իրաւունքներ:

Այսպէս, հաշտարար դատաւորների համագումար ժողովը կազմում էր բարձրագոյն աստեան, որտեղ քննվում էին պեղական ինքնավարութեան գործերը: Հաշտարար դատաւորների ու նրանց համագումարի դատին ենթակա էին ինքնավարութեան բոլոր պաշտօնատար անձինք: Հաշտարար դատաւորները ըստ ծառայութեան հաշվում էին ուպրաւանների ու ոտճիկական վարչութիւնների անդամներ: Սրանք էին հաստատում գեմատվային վարչութեան տարեկան նախահաշիւը ու հարկերի բաշխումը, կառավարում բանտերը, հաղորդակցութեան կամուրջները ու խելագարների ապաստարանները:

Շրջաններում, ի դէմս հաշտարար դատաւորների, հարուստ ու անուանի ազնուականները ու հողատէրերը խառնվում էին ազգաբնակչութեան հետ և միասին վարում նոյն շրջանին վերաբերեալ բոլոր գործերը:

Բարձրագոյն կառավարութիւնը ամենևին չէր միջամտում պեղական ինքնավարութեան գործերի էութեանը: Նա չէր միջամտում ոչ գեմատվոյի մարդկանց ընտրութիւններին, ոչ նրանց արած ծախքերին,

նչ գեմատվոյի պաշտօնատար անձանց վերաբերեալ խնդիրներին, այլ միայն հսկում էր. գեմատվային հաստատութիւններին, նպատակ ունենալով հետևելու օրէնքների կանոնաւոր գործադրութեան, որի համար և նա ժամանակ առ ժամանակ ուղարկում էր իր քննիչներին: Չգեմատվային հաստատութիւնների ապօրինի վճիռների դէմ բողոք էին յարուցանում միսխտրները, բայց միաժամանակ և տեղական ինքնավարութեան ամեն մի մարդ իրաւունք ունէր բողոքելու արքայական դատարանին միսխտրների գործողութեան դէմ:

1888 թ. տեղի ունեցաւ նոր բարեփոխութիւն, որ աւելի ընդարձակեց անգլիական ինքնավարութիւնը:

Մմբողջ Անգլիան բաժանուած էր 122 վիճակների (графство), որոնք մօտաւորապէս համապատասխանում են մեր նահանգներին: Առաջուայ նման կառավարութիւնը իւրաքանչիւր վիճակի համար նշանակում էր մեր նահանգապետի նման մի կառավարիչ: Անգլիայում դա կոչվում էր լօրդ-փոխարքայ և ամենևին չէր միջամտում տեղական գործերին, որոնք զտնվում էին ամբողջովին գեմատվոյի ձեռքին:

Ամեն մի վիճակում գեմատվոյի գլուխ են անցած ուպրավայի նախագահը, որին

ընտրում է ազգաբնակիւթիւնը և որի պաշտօնի հետ կապուած են և հաշտարար դատաւորի պարտականութիւնները, — և ուպրավայի անդամները, որոնք նոյնպէս ժողովրդի կողմից են ընտրուած: Եւ այս գեմատվոյի ուպրավաները վարում են վիճակի բացառապէս բոլոր գործերը՝ հարկերը, տուրքերը, ուսումնարանները, հիւանդանոցները, ճանապարհները, բանտերը և առհասարակ ամեն տեսակ հաստատութիւնները: Նոյն իսկ ոստիկանութիւնը ենթարկվում է գեմատվոյին, որովհետև, համաձայն 1888 թ. բարենորոգման, ոստիկանութիւնը կառավարում էին հաշտարար դատաւորները, իսկ սրանց համագումարին մասնակցում էին գեմատվոյի ուպրավաների անդամները:

Բոլոր ասածներից մենք տեսնում ենք, որ Անգլիայում շատ հեռաւոր ժամանակներից սկսած ժողովուրդը ինքն էր կարգադրում իր գործերը և ինքնավարութիւնը այդ երկրում այն աստիճան արիւն ու մարմին էր դարձել ամբողջ ազգաբնակիւթեան համար, որ ոչ մի անգլիացի չէ կարող երեւկայել իրան, թէ ինչպէս կարելի է հեռացնել ազգաբնակիւթիւնը հասարակական գործերից ու առանց նրա գիտութեան կարգադրել այն միջոցները, որ նա տալիս է իր շրջանի կարիքները հոգալու համար:

«Քանի որ ինձանից վերցնում են հարկ, — այսպէս է դատում անգլիացին, — և ես տալիս եմ տուրքեր, ուրեմն և ես պիտի անպատճառ իմանամ, թէ ո՞ւր են գնում իմ քրտինքով վաստակած փողերը կամ իրական կարիքների վրայ է, արգեօք, գործադրվում իմ աշխատանքը: Այս բանը բացի ինձանից ու իմ ընտրած մարդկանցից չեմ կարող ոչ ոքի վստահել, առաւել ևս նշանակուած շինողիկներին, որոնք, եթէ նոյն իսկ բարեխղճօրէն էլ վերաբերուէին — որը սակաւ է պատահում — ոչ մի հնարաւորութիւն չունին ներշնչուելու որոշ տեղի ազգաբնակութեան շահերով»:

Ժողովրդական ազատութիւնը անգլիացիք մարդու ընածին իրաւունքն են համարում: Օրէնքները խիստ պաշտպանում են նրանց ինքավարութիւնը, և ոչ մի իշխանութիւն չէ կարող խաղտել այդ օրէնքները, որովհետև իւրաքանչիւր անգլիացի, որքան էլ նա ազքատ լինի, հնարաւորութիւն ունի պաշտպանելու իր շահերը: Անգլիական ժողովրդի ընտրած ներկայացուցիչները մասնակցում են պետական վարչութեան և ամեն ժամանակ կարող են պատասխանատվութեան ենթարկել իւրաքանչիւր մինիստրին, որ կը յանդգնի խաղտել անգլիացիներէ՛ր վարերով սրբազործուած իրաւունքները:

Այս պատճառով էլ, նախ քան ուսական դեմստվոյի մասին խօսելը, մենք հարկաւոր համարեցինք համառօտակի ծանօթացնել ընթերցողներին անգլիական նոյն օրինակ հաստատութիւնների հետ:



Ռուս ժողովրդի Ա. Բախուր չունի ոչ մի նմանութիւն անգլիացու թախտի հետ: Ռուս ժողովուրդը իր ամբողջ կեանքի ընթացքում երբէք չէ վայելել այնպիսի ազատութիւն, որպիսին անգլիացիք:

Հեռաւոր ժամանակներում Ռուսաստանը բաղկացած էր բազմաթիւ իշխանութիւններից: Պատմական այդ շրջանում երկրում գոյութիւն ունէին ժողովրդական ինքնավարութեան որոշ նշոյլներ: Դրանց արտայայտիչներն էին ժողովրդական «վեշե»-ն ու «իշխանսկրսն դոռմա»-ները:

Ժողովրդական վեշեներին կարող էին մասնակցել բոլոր ազատ, չը ճորտացած ազգաբնակութիւնը, սակայն այդ մասնակցութիւնը պարտադիր չէր. ով ցանկանում էր, գալիս էր վէչէն. ով չէր կամենում՝ չէր գալիս:

Վեշեներում քննվում էին զլխաւորապէս նոր իշխանի ընտրութեան կամ հնի

արտաքսելու ինդիքները, իսկ երբեմն քրն-
 փում էին դատաստանական ու օրէնսդրա-
 կան գործերը ժողովրդական վէչէն հասել
 էր ամենամեծ զարգացման Նովգորոդի,
 Պսկովի ու Սմօլենսկի իշխանութիւններում:
 Այս իշխանութիւնների քաղաքները՝ Նովգո-
 րոդը, Պսկովը ու Սմօլենսկը՝ կապուած էին
 առևտրական սերտ կապերով Եւրոպայի հետ,
 ինչու և այստեղ առաջ էր եկել ազդեցիկ
 անտարական դասակարգ, որ հնարաւո-
 րութիւն ունէր պաշտպանելու իր իրա-
 ւունքները: Այս իշխանութիւններում վէչէ-
 ները աւելի երկար ժամանակ պահպանեցին
 իրանց գոյութիւնը, որովհետև նրանց չի
 դիպաւ թրքական արշաւանքը, որը, թերևս,
 դարձաւ այն պատճառներից մէկը, որնաբ-
 խեղդեցին ռուսական ինքնավարութիւնը
 սաղմի մէջ:

Բացի վէչէններից կային, ինչպէս ար-
 դէն ասացինք, «իշխանակալն դռմաներ»:
 Այս դռմաներին մասնակցում էին բայեար-
 ները (бояре) և առհասարակ հարուստ ու
 ազդեցիկ մարդիկ, որոնց օգնութեան կա-
 րիք ունէին իշխանները և առանց նրանց
 հետ խորհրդակցելու իշխանը չէր վստահա-
 նում ձեռնարկել որևէ լուրջ գործ:

Այսպէս իշխանական դռմանները բաղ-
 կացած էին անուանի ու տոնմաւոր մարդ-

կանցից, իսկ վէչէնները համաժողովրդական
 էին:

Իշխանը, կարծես, դռմայի ու վէչէի
 կամքի գործադրողն էր:

Նրա պարտականութիւնն էր վարել
 արդարադատութիւնը, հաւաքել հարկերը,
 պաշտպանել երկիրը թշնամու արշաւանրից,
 և այս դէպքում իշխանը համարվում էր
 զօրավար:

Այս պարտականութիւնները կատարե-
 լու ժամանակ իշխանի անմիջական օգնա-
 կաններն էին՝ դրուժինսիկները ու բայեար-
 ները, որոնցից վերջը առաջ եկաւ ռուս ազ-
 նուականութիւնը:

Այս նկարագրած ամբողջ շրջանը կոչ-
 վում է իշխանակալն շրջան: Սա տեղեց
 մինչև որ բոլոր առանձին իշխանութիւննե-
 րը չը դադարեցրին իրանց ինքնուրոյն գո-
 յութիւնը պահպանելուց ու միանալով չը
 կազմեցին մի պետութիւն՝ Մոսկուայի Թա-
 զապարտութիւնը, և Մոսկուայի իշխանը դա-
 ռաւ թագաւոր:

Այդ ժամանակից սկսվում է արդէն
 նոր պատմական շրջան՝ Մալիուայի կամ
 Թազապարտական շրջան:

Մենք մանրամասնօրէն չենք նկարա-
 գրի Մոսկուայի շրջանի ամբողջ պետական
 կազմը, այլ կանգն կտունենք միայն այդ ժա-

մանակ գոյութիւն ունեցող ինքնավար մար-
մինների վրայ:

Մոսկուայի թագաւորութեան մէջ վէ-
չէի գերը կատարում էր «գիմնսկի սարքը»,
իսկ իշխանական դոմայի տեղ առաջ եկաւ
«բայելարների դոման»:

Բայց այս հիմնարկութիւնները խիստ
տարբերվում էին իշխանական շրջանի ի-
րանց նախորդներից:

Մինչդեռ վէչէին մասնակցում էր ամ-
բողջ ազատ ազգաբնակչութիւնը, զեմսկի
սաբորը կազմում էին այն մարդիկ, որոնց
կառավարութիւնը կանչում էր հոգևորա-
կաններին, ազնուականների ու չինովնիկնե-
րի շարքերից: Ձեմսկի սաբորի նոյն իսկ
այդ անդամները չունէին վճռողական ձայն,
այլ միայն խորհրդակցական ձայն: Նրանք
արտայայտում էին իրանց կարծիքը, բայց
կառավարութիւնից էր կախուած համաձայ-
նուել զեմսկի սաբորի հետ թէ ոչ:

Միայն 1598 թուականից սկսած զեմ-
սկի սաբորը դարձաւ որոշ չափով ընտրովի
հիմնարկութիւն, բայց ոչ երկար ժամանա-
կով. կառավարութեան կամքով էր նա ա-
ռաջ եկել, նրա կամքով էլ ոչնչացաւ:

Եւ եթէ զեմսկի սաբորը չէր հանդիսա-
նում ժողովրդի շահերի ներկայացուցիչ,
բայեարսկի դոման իր կողմից ևս առաւել

չէր ներկայացնում այդ շահերը:

Իսկ ամենից առաջ մի գուտ արիստո-
կրատիական, ազնուական հիմնարկութիւն
էր: Դոմային մասնակցում էին միմիայն
բարձրաստիճան բայեարները: Բայեարսկի
դոման թագաւորի համար միայն գուտ
խորհրդակցական օրգան էր ու չունէր ին-
քնուրոյն նշանակութիւն: Այնտեղ բոլոր
հարցերը քննվում էին թագաւորի հրամա-
նով կամ նրա նախաձեռնութեամբ:

Պետրոս մեծի թագաւորութեամբ ամբողջ
իշխանութիւնը կենտրոնանում է միայն
թագաւորի ձեռքում: Այդ օրուանից սկսած
մինչև 1864 թ., այսինքն՝ 175 տարուայ
ընթացքում Ռուսաստանում այլ ևս գոյու-
թիւն չունէին նոյն իսկ այնպիսի շնչին
ներկայացուցչութեան նշաններ, որպիսին
էին զեմսկի սաբորը և բայեարսկի դոման:

Ստրկացած ազգաբնակչութիւնը, զըր-
կուած ամեն մարդկայն իրաւունքներից,
կրում էր բոլոր ծանրութիւնները, չունե-
նալով ոչ մի հնարաւորութիւն արտայայտե-
լու իր կարիքները, պաշտպանվելու կառա-
վարութեան ու կալուածատէրերի կամայա-
կանութիւնից, իսկ բարձր դասակարգերը
իրենց կողմից հանդիսանում էին ամբողջա-
պէս թագաւորին ենթարկուած պաշտօնա-
տար դատակարգ:

Եկատերինս՝ Մ-ի Թագաւորութեան անաշին տարին, 1762 թ. ազնուականութիւնը, ազատուելով պարտադիր զինուորական ծառայութիւնից, դարարեց հասարակ նշանակութեամբ դասակարգ լինելուց և դարձաւ արտօնեալ դասակարգ:

Այդ ժամանակ լուրեր էին պտտում որ ժողովուրդը ևս կազմուի կալուածատէրերից, բայց նա ստիպուած եղաւ դարձեալ 100 տարի ստրկութեան մէջ մնալ:

Միայն 1861 թ. Ադէքսանդր Մ-ի Թագաւորութեան օրով, վերջապէս, կործանուեց ստրկական շրջանը: Այդ ազատութեան տրամաբանական հետեանքն էր ուսանակ գեւնայօն կամ ինքնաշարժութիւնը, որի ծանօթութեանը և մենք դիմում ենք:

* *

Ճորտութեան վերացման նախագծի հետ միաժամանակ ծագում է և գեմսովային հիմնարկութիւնները ներմուծելու միտքը: Ճորտատիրութիւնը սպանում էր ժողովրդի բոլոր կենդանի ոյժերը, և եթէ ազգաբնակչութեան նոյն գրութիւնը շարունակուէր, անշուշտ, պետութեան կործանումը անխուսափելի էր: Չինովսիկութիւնը վարում էր երկիրը ըստ իր քմեհանգի, չա-

փագանց ի չարը գործ դնելով իր «իշխանութիւնը»:

«Ժողովրդի սմբողջ կեանքը ենթակայ է ինամատարութեան, գրում էր այն ժամանակուայ մի գործիչ: Չկայ նոյն իսկ մի աննշան բան, որ անպայման վստահուած լինէր իրան ժողովրդին: Ամեն ինչ կամարվում էր բարձր իշխանութեան թոյլտվութեամբ: Ժողովուրդը չէր համարձակվում ընդհանուր միջոցներով վարձել մի սայլ կամ մի խրճիթ հազարգակցական կամ բնակարանի տուրքը կատարելու համար: չէ կարող մի անպէտք կամուրջ անցկացնել, իրանուց չունի նոյն իսկ վարձել գրադիտութեան մի ընդհանուր ուսուցիչ... Բոլոր գործադիր հիմնարկութիւններում անթիւ ու անհամար գործերը կազմում էին թղթերի ճակայական կայոցներ, որոնց քննելու համար հարկուտ էին տանեակ ու նոյն իսկ հարիւրաւոր դիւանական շինովսիկները: Այս բոլորի հետեանքը այն էր, որ վարչական գործերը գտնվում էին բոլորովին ոչ այն մարդկանց ձեռքին, որոնց նրանք յանձնուած էին»:

Գործերի մեծ մասը անհրաժեշտօրէն պիտի անցնի իշխանաւորներից նրանց դիւաններին, որոնք և իրանց ստորադրեալները վերաբերմամբ ձեռք բերին մահուան ու-

կեանքի իրաւունք և գործում էին ուրիշի քօղի տակ միանգամայն առանց որևէ պատասխանատուութեան: Բնականաբար գործադիր հիմնարկութիւնները լցվում էին պրիսւնըրայէս մարդկանցով, որոնք, հրաժարուելով իրանց մարդկային արժանաւորութիւնից, դարձրել էին պետական ծառայութիւնը մի նողկալի արեւտը»:

Անս թէ ինչ էր գրում 1855 թ. կոմս Պ. Ա. Վալուերը, որ 1861 թ. նշանակուած էր ներքին գործերի մինիստր:

«Նպաստաւոր է, արդեօք, մեր պետական վարչութեան զանազան ճիւղերի կազդրմ Ռուսաստանի հոգեկան ու նիւթակա ոյժերի զարգացման համար, — հարցնում է հեղինակը և պատասխանում այդ վարչութեան բնորոշ գծերը կամզում են այն, որ ամենտեղ պակասում է ճշմարտութիւնը, կառավարութիւնը չէ զստահանում իր սեփական գործիքներին և ամեն բան արհամարում է:

Բազմաթիւ ձեականութիւնները խեղդում են վարչական գործնէութեան էսութիւնը ու ապահովում ընդհանուր պաշտօնական կեղծիքը»:

Այսպիսի կարգեր էին տիրում Ռուսաստանում վերանորոգութիւնից առաջ և ամենեկին զարմանալի չէ, որ զիւղացիների

ճարտութիւնից սոգատերու նախագծի հետ միաժամանակ ծագեց և զեմստովային հիմնարկութիւնները զաղափարը:

1859 թ. մարտի 25-ի բարձրագոյն հրամանի մէջ արդէն ասուած էր, ի միջի այլոց, որ «գործադիր ու քննողական մասերը կազմակերպելիս՝ քննել զաւանի արնատեսական — կարգադրողական (распорядительный) վարչութեան փնդիրները և միևնոյն ժամանակ որոշել, թէ որքան անհրաժեշտ է զաւանի տնտեսական վարչութեանը վերապահել աւելի ամբողջութիւն, ինքնուրոյնութիւն ու վստահութիւն»:

1862 թ. մինիստրների խորհրդում ներկայացուած էր բարձրագոյն հայեցողութեան զեմստովային (հիմնարկութիւնների կանոնադրութեան ուրուագիծը), որը յետոյ նոյն մինիստրական խորհրդի առանձին խորհրդակցական ժողովում քննութեան պատուեց, ու ենթարկուեց արքագրութիւններու 1864 թ. յունուարի 1-ին վերջնականապէս մշակուած նախագծերը առաջարկուեցին պետական խորհրդարանի ընդհանուր ժողովին և այդ օր զեմստովային հիմնարկութիւնների կանոնադրութիւնը օրէնքի ոյժ ստացաւ միևնոյն ժամանակ հրամայուած էր ներմուծել նոր օրէնքը Երոպական Ռուսաստանի 33 նահանգներում:

Նոր կանոնադրութեան ներմուծումը սկսուեց 1865 թ., իսկ 1876 թ. գեմատվային հիմնարկութիւնները մտցրուած էին Եւրոպական Ռուսաստանի 34 նահանգներում ու Դոնի-Չորքի շրջանում, որտեղ սակայն, 1882 թ. դադարեց նրանց գործադրութիւնը:

1864 թ. առաջին գեմատվային կանոնադրութեան մէջ ասուծ էր, որ գեմատվային Երկրաբանութիւնները կազմէին և՛ կրտսէրներու խորարանչիւր Ասիական ու խորարանչիւր գառաւոր տեղական տնտեսական շահերին ու կարիքներին վերաբերեալ գործերը:

Զեմատվոյ տեսչութեան ենթակայ էին հետեւեալ գործերը. 1) գեմատվոյի գոյքերի, գրամագլուխների ու գրամական տուրքերի վերահաստեթիւնը, 2) գեմատվոյին պատկանող շինութիւնների, ուրիշ կառուցումների ու հաղորդակցութեան ճանապարհների շինութիւնը ու պահպանութիւնը, 3) ժողովրդական մատակարարութիւնը (народное продовольствие) ապահովելու միջոցները, 4) գեմատվոյին բարեգործական հաստատութիւնների կառավարութիւնը ու ինամատարութեան այլ միջոցները. մուրացկանութեան դադարեցման միջոցները. 5) գեմատվոյի գոյքերի ապահովագրումը. 6) տեղա-

կան առևարի ու արդիւնադործութեան զարգացման մասին հոգատարութիւնը. 7) ժողովրդական կրթութեան, ժողովրդական առողջութեան ու բանտերի հոգատարութեան մէջ մասնակցութիւնը. 8) աշակցութիւն առաջն տոնելու անասունների կոտորածները, նոյնպէս և պահպանելու ցանքերը, մարգագետինները, անտառները ու այգիները մորեխի, առնէտների և ուրիշ վնասակար միջատների ու կենդանիների աւերումներից. 9) զինուորական և քաղաքացիական վարչութիւնների կողմից գեմատվոյի վրայ դրած պահանջների կատարումը և պօստային տուրքերի մէջ մասնակցութիւն 10) դասաւորումն պետական գրամական այն տուրքերի, որոնց կարգաւորումը նահանգի ու գաւառների մէջ յանձնուած է գեմատվային հիմնարկութիւններին. 11) նահանգի կամ գաւառի գեմատվային պահանջներին բաւարարութիւն տալու համար տեղական տուրքերի նշանակելը, գասաւորելը, հաւաքելը ու ծախսելը. 12) ներկայացնել կառավարութեան տեղեկութիւններ ու եզրակացութիւններ նահանգի ու գաւառի տեղական տնտեսական շահերին ու կարիքներին վերաբերեալ աւարկաների մասին և միջնորդութիւններ դրանց վերաբերութեամբ. ներկայացնել ըստ կառավար-

բութեան պահանջի տեղեկութիւններ գեմատփային տնտեսութեան վերաբերեալ և, վերջապէս, 13) գեմատփային հիմնարկութիւնների պաշտօնեաների ու անդամների ընտրութիւններ կատարելը ու այդ հաստատութիւնների պահպանութեան համար հարկաւոր գումարների նշանակելը:

Ձեմատփային հիմնարկութիւնները բաժանուած էին գաւառականների ու նահանգականների:

Գաւառական գեմատփային հիմնարկութիւնները կազմում էին գաւառական գեմատփային ժողովները (Уѣздные земское собрание) ու գաւառական գեմատփային տարազանները կամ վարչութիւնները:

Գաւառական գեմատփային ժողովները բաղկացած էին ձայնատրներից, որոնց ընտրում էր ինքը սագարնակութիւնը:

Գաւառական ձայնատրների ընտրութիւնները կատարվում էին գաւառի հողատերերի, քաղաքի ընտրողների ու գիղական հասարակութիւնների ընտրեալների համագործակցութեամբ:

Գաւառական հողատերերի ընտրողական համագործակցութեան իրաւունք ունէին մասնակցելու այն բոլոր անձինք, որոնք ունէին որոշ ցենց, այսինքն ունէին հողեր, տներ, տնտեսական հիմնարկութիւններ կամ

մի այլ գոյք: Իւրաքանչիւր գաւառի համար որոշուած էր, քանի գետեատին հող պիտի ունենալ*):

Ինչ վերաբերում է ուրիշ գոյքերին, բացի հողից, գաւառական հողատէրերի համագումարներին մասնակցելու համար անհրաժեշտ էր, որ նրանց արժողութիւնը 15000 ըւբլուց պակաս չը լինէր կամ տարեկան 6000 ըւբլուց *չ պակաս շրջանառութիւն ունենային:

Սրանից պարզ երևում է, որ գաւառական հողատէրերի համագումարին կարող

*) Այսպէս, օրինակ, գաւառական հողատէրերի համագումարին մասնակցելու իրաւունքի համար պահանջվում էր Տվերի, Վլադիմիրի ու Մոսկովի նահանգներում 250 դեսեատինից ոչ պակաս հող, իսկ Կազանի, Տամբովի, Տուլայի, Կուրսկի, Պոլտավայի, Մոսկուայի ու Բեաղանի նահանգներում՝ 200 դեսեատին, Օլոնեցկի նահանգում՝ 475 դեսեատին հող, միւս բոլոր գեմատփային նահանգներում հողի որակութեան համեմատ գաւառները բաւական տարբերվում էին իրանց ցենցով: Օրինակ, Վոլոգոդսկի նահանգի երկու գաւառում հողի քանակը որոշուած էր 250 դեսեատին, մի գաւառում՝ 350 դեսեատին, շորս գաւառում՝ 800 դեսեատին. Խարկովի նահանգի վեց գաւառներում ցենցը հասնում էր 200 դեսեատինի, իսկ հինգ գաւառներում՝ 520 դեսեատինի և այլն, և այլն:

էին մասնակցել միայն հարուստ կալուածատէրեր, վաճառականներ, գործարանատէրեր և զիւղացիներից նրանք, որոնք ունէին մեծ քանակութեամբ հողեր, իբրև անհատական սեպհականութիւնս:

Բացի առանձին սեպհականատէրերից կարող էին ի դէմս իրանց ներկայացուցիչների մասնակցել գաւառական հողատէրերի համագումարին արևտրական, կրթական և ուրիշ հասարակութիւններ, ընկերութիւններ, ընկերակցութիւններ, որոնք ունէին որոշուած չափով գոյք, նոյնպէս և եկեղեցական պաշտօնեաների լիազօրները, եթէ եկեղեցական հողերի քանակը համապատասխանում էր այդ գաւառի համար օրէնքով ընդունուած ցենզին:

Ուրեմն, գաւառական հողատէրերի համագումարին կարող էին մասնակցել այնքան ներկայացուցիչներ, որքան ցենզ ունեցող սեպհականատէրեր էին գտնվում գաւառում:

Ենթադրենք, որ այս ինչ գաւառում կայ 500 հազար դեսեատին հող, որոնցից 300 հազարը զիւղական հասարակութեանն է նշանակում է, որ գաւառի հողատէրերի ընտրողական համագումար ժողովին կարող էին մասնակցել այն անձինք, որոնց պատկանում էր 200 հազար դեսեատին հող:

Եթէ այդ գաւառի համար ցենզը որոշուած էր, ենթադրենք, 200 դեսեատին, հետևաբար, գաւառի հողատէրերի ընտրողական համագումար ժողովին կարող էին մասնակցել 1000 հողի:

Գաւառի հողատէրերի համագումարները հրաւիրում էին ձայնաւորների ընտրութեան համար կամ գաւառի քաղաքում, կազմելով մի ընդհանուր համագումար, կամ հաւաքում էին մասնաւոր, բաժանուած առանձին ուստիկանական բաժինների:

Համագումարները հրաւիրում էր ունախազահում գաւառի ազնուականների պարագլուխը: Ընտրողները հաւաքվում էին ու խորհրդակցելով ընտրում էին գաղտնի քուէարկութիամբ, այսինքն տուփերով, զննատվային ժողովի ձայնաւորներին: Այն անձինք, որոնք ստանում էին աւելի շատ ընտրողական քուէներ, քան ոչ ընտրողական, համարվում էին ձայնաւորներ, ընտրութիւնը տեւում էր մինչև որ գաւառի համար որոշուած կալուածատէր—ձայնաւորների թիւը չէր լրանում: Մի քանի գաւառներում ձայնաւորների թիւը հասնում էր երկուսի (օրինակ, Օլօնեցկի նահանգի Պուզօ գաւառում), իսկ միւսներում՝ մինչև 40-ի (օրինակ, Սերսօնի նահանգի Ելիսավեժդարդ գաւառում):

Այսպէս էր իրերի գրութիւնը գաւառի խոշոր հողատէրերի համագումարներում:

Գիւղական հասարակութիւնների ընտրելաների համագումարներին մասնակցում էին վոլոստնոյ սխօզի կողմից նշանակուած ընտրողները: Այս ընտրեալների թիւը չէր կարող աւելի լինել, քան այն տանտէրերի երրորդ մասը, որոնք իրաւունք ունէին մասնակցելու վոլոստնոյ սխօզին, սակայն մի պայմանով, որ իւրաքանչիւր գիւղական հասարակութիւն ունենար առնուազն մէկ ներկայացուցիչ:

Եթէ, օրինակ, վոլոստնոյ սխօզին իրաւունք ունէին մասնակցելու 600 տանտէրեր, հետեւաբար գիւղական հասարակութիւնների ընտրեալների համագումարում կը լինէր 200 հոգուց ո՛չ աւել և դրանց թւում անհրաժեշտօրէն պիտի լինէին գէթ մի-մի ներկայացուցիչ այդ վոլոստի իւրաքանչիւր գիւղի կողմից:

Գիւղացիական համագումարները նշանակվում էին նահանգական վարչութեան (губернское правление) կարգադրութեամբ վոլոստի մի քանի կէտերում՝ հաշտարար դատաստանական բաժիններում կամ սոսնանրում: Այս համագումարները սկզբում բացում էին հաշտարար միջնորդները (мировые посредники), իսկ յետոյ հաշտարար

դատաւորները, երբ ստեղծուեց սրանց պաշտօնը:

Բացելով համագումարը, հաշտարար միջնորդը առաջարկում էր գիւղացիներին ընտրել նախագահ, հաստատում էր սրան, ապա համագումարը զբաղվում էր ընտրութիւններով իր նախագահի ղեկավարութեամբ, իսկ հաշտարար միջնորդը միայն բացատրում էր տեղի ունեցող թիւրիմացութիւնները:

Ընտրութիւնները գիւղացիական համագումարներում կատարվում էին այնպէս, ինչպէս և գաւառական հողատէրերի համագումարում, այսինքն, նախ թիկնածուներ էին նշանակում, ապա ենթարկում դրանց գաղտնի քուէարկութեան:

Ինչ վերաբերում է գիւղացի ձայնաւորների քանակին, դրանց թիւը նոյնպէս տարբերվում էր զանազան գաւառներում, մի գաւառում հասնում էր չորս հոգու (օրինակ, Պետերբուրգի նահանգի Շիսսելբուրգի գաւառում), իսկ միւս գաւառներում մինչև 40-ի (օրինակ, Սամարայի նահանգի Բուզուլուկսկի գաւառում):

Վերջապէս, ձայնաւորները քաղաքների կողմից ընտրվում էին քաղաքային ընտրողական համագումար ժողովում: Այս համագումարին մասնակցելու իրաւունք ու-

նէին՝ 1) արևտրական վկայական ունեցող անձինք, 2) ֆաբրիկաների, գործարանների և ուրիշ առևտրական ու արդիւնարերական հիմնարկութիւնների տէրեր, որոնց արդիւնաբերութեան տարեկան շրջանառութիւնը 6000 ռուբլուց պակաս չէր, 3) այն անձինք, որոնց քաղաքային հողի վրայ ունեցած անշարժ սեպհականութիւնը արժէր ոչ պակաս քան 500 ռուբլի փոքր քաղաքներում և 3000 ռուբլի մեծ քաղաքներում և 4) մասնաւոր սեպհականատէրերի, զանազան հաստատութիւնների ու ընկերութիւնների հաւատարմատարները և այլն:

Քաղաքային ընտրողական համագումարներում նախագահում էին քաղաքագլուխները:

Ընտրութիւնները կատարվում էին նոյն կարգով, ինչ ձևով հողատէրերի ու գիւղացիների համագումարներում:

Հետևաբար գաւառական զեմստվոյի ժողովները բաղկացած էին հողատէրերի, գիւղացիների ու քաղաքների կողմից ուղարկած ձայնաւորներից:

Մենք տեսանք արդէն, որ իւրաքանչիւր համագումարի ձայնաւորների քանակը, նայած գաւառին, տարբեր էր, այդ իսկ պատճառով, բնականաբար, միատեսակ չէր

և գաւառի ժողովների ձայնաւորների ընդհանուր թիւը: Գաւառներ կային, որտեղ ձայնաւորների ընդհանուր թիւը՝ թէ՛ հողատէրերից և թէ՛ գիւղացիներից ու քաղաքներից 10-ից չէր անցնում, քայք կային և այնպիսի գաւառներ, որտեղ նրանց թիւը հասնում էր 96-ի:

Այդ կախում էր գաւառի անշարժ կալուածների դասաւորումից և այդ գոյքերի ներկայացուցիչների թւից:

Եթէ համագումարներում ընտրողների քանակը աւելի սակաւ էր, քան որքան մարդ էր հարկաւոր ընտրել, այդ դէպքում բոլոր հաւաքուած ընտրողները համարվում էին զեմստվոյի ժողովի ձայնաւորներ առանց ընտրութեան:

Համագումարների ընտրութիւններին իրաւունք չունէին մասնակցելու՝ 1) 25 տարեկանից փոքրերը, 2) դատի ենթարկուած և դեռ դատարանի կողմից չարգարացածները, 3) պաշտօնանկները, 4) դատի ու քննութեան տակ գտնուողները, 5) սնանկները ու 6) հոգևոր վարչութիւնից արտաքսուածները:

Ձայնաւորներ չէին կարող ընտրուել նոյնպէս նահանգապետները ու փոխնահանգապետները, նահանգական վարչութեան անդամները, նահանգական ու գաւառական

դատախազները ու ոստիկանութեան մէջ
ժառայողները:

Չայնաւորները ընտրվում էին երեք
տարով: Չեմստվոյի ժողովներից դուրս
ներսնք չէին վայելում ոչ մի արտօնութիւն
ու ոտճիկ էլ չէին ստանում:

Տարէնը մի անգամ նահանգապետի
թոյլտուութեամբ հաւաքվում էին ընտրուած
ճայնաւորները գաւառական քաղաքը գառա-
նական զեմստվոյի ներթաւան ժողովի:
Վերջինս բացվում էր միայն այն դէպքում,
երբ ներկայ էին գաւառի ճայնաւորների
երրորդ մասը կամ յամենայնդէպս 10 հո-
գուց ոչ պակաս:

Բացի ընտրուած ճայնաւորներից գա-
ւառական զեմստվոյի ժողովի կազմի մէջ
մտնում էին պետական կալուածների ու
ուղէլի վարչութեան ներկայացուցիչները,
եթէ միայն գաւառում կային պետական
կամ ուղէլի հողեր:

Հերթական գաւառական զեմստվոյի
ժողովը ընտրում էր իր միջից գառառա-
նական զեմստվոյի վարչութիւն կամ ուսուցա-
վա և նահանգական զեմստվոյի ժողովի ճայ-
նաւորներին:

Գաւառական զեմստվոյի ուսուցիչան
քաղկացած էր նախագահից ու երկու ան-
դամից, որոնք ընտրվում էին երեք տարով:

Ուսուցիչի նախագահին հաստատուած
էր իր պաշտօնի մէջ նահանգապետը: Ուս-
ուցիչի թէ նախագահը և թէ անդամները
ստանում էին ոտճիկ, որի չափը որոշում
էր զեմստվոյի ժողովը:

Գաւառական զեմստվոյի ուսուցիչան
կատարում էր գաւառական զեմստվոյի ժո-
ղովի վճիռները:

Բացի հերթական ժողովներից տեղի
էին ունենում արտակարգ ժողովներ, ո-
րոնք նշանակվում էին կարևոր դէպքերում:

Արտակարգ ժողովներ հրաւիրելու հա-
մար հարկաւոր էր ներքին գործերի մի-
նիստրի թոյլտուութիւնը:

Գաւառական զեմստվոյի ժողովները ու
ուսուցիչաները վարում էին գաւառի գոր-
ծերը:

Բացի այդ առանձնապէս վերաբերում
էին նրանց վերահասութեան՝ 1) բաշ-
խումն գաւառի այն պետական ու նահան-
գական սուրբերի, որոնք օրէնքով վերա-
պահուած էին զեմստվոյին հիմնարկութիւն-
ներին. 2) այն ընդհանուր նահանգական
սուրբերի չափի ու նրանց գործադրու-
թեան միջոցների նախնական որոշումը, ո-
րոնք ընկնում էին գաւառի վրայ. սա ժո-
ղովում էր նահանգական ուսուցիչան.
3) ներկայացնել նահանգական զեմստվոյին

տեղեկութիւններ ու եզրափակումներ գա-
 ւառի տնտեսութեան մասին 4) թոյլտու-
 թիւն տալ սարքել աճուրդներ, բացել շու-
 կաներ ու տօնավաճառներ, տեղափոխել
 դրանց ուրիշ տեղեր կամ փոփոխել դրանց
 ժամանակամիջոցը 5) հաղորդակցութեան
 ճանապարհների շինութիւնը ու պահպան-
 նութիւնը. համաձայն նահանգական ու պրա-
 վայի ցուցմունքների՝ կարգադրել ու հսկել
 գաւառի միջով անցող ընդհանուր նահան-
 գական հաղորդակցութեան ճանապարհների
 շինութեան վրայ:

* *

Նահանգական զեմստվոյի ժողովը
 կազմվում էր նահանգական ձայնաւորներից,
 որոնց, ինչպէս մենք արդէն ասայինք,
 ընտրում էին իրանց միջից գաւառական
 զեմստվոյի ժողովները երեք տարի ժամա-
 նակով: Նահանգական ձայնաւորների թիւը
 որոշվում էր գաւառական զեմստվոյի ժո-
 ղովի ձայնաւորների թւի համեմատ, այդ
 պատճառով էլ զանազան նահանգներում
 նրանց քանակը տարբեր էր: Մինչդեռ, օրի-
 նակ, Օդոնեցկի նահանգում կային 15 նա-
 հանգական ձայնաւորներ, Տամբովի ու Պոլ-
 տաւայի նահանգներում նրանց թիւը հաս-
 նում էր 100-ի:

Նահանգական զեմստվոյի ձայնաւորնե-
 րը տարին մի անգամ հաւաքվում էին նա-
 հանգական քաղաքներում նահանգական
 զեմստվոյի ներթափանց ժողովի, որը տեղի
 էր ունենում նահանգի ազնուականութեան
 պարագլխի նախագահութեամբ:

Հերթական ժողովում ընտրվում էր
 երեք տարով նահանգական ու պրաւայսն,
 որ բաղկացած էր նախագահից և ու պրա-
 վայի անդամներից, սրանց թիւը պիտի լի-
 նէր երկուսից ոչ պակաս և վեցից ոչ ավել:
 Նախագահին իր պաշտօնի մէջ հաստատում
 էր ներքին գործերի մինիստրը:

Նախագահին ու ու պրավայի անդամնե-
 րին ուժեղ նշանակելը կախում էր նահան-
 գական զեմստվոյի ժողովից:

Նահանգական ու պրավայն գործադրում
 էր նահանգական զեմստվոյի ժողովի վճիռ-
 ները. սրա ղեկավարութեամբ կառավարում
 էր զեմստվոյի գոյքը: Նահանգական ու պրա-
 վան նախօրօք պատրաստում էր զեմստվոյի
 ժողովի համար ինչ որ կարևոր էր. կազ-
 մում էր նախահաշիւները, հաշուէտվութիւ-
 նը՝ դատաւորում էր տուրքերը, հսկում էր
 եկամուտի կանոնաւոր ստանալու վրայ,
 ծախսում էր զեմստվոյի գումարները,
 պահպանում էր դատաստանական հիմնար-
 կութիւններում զեմստվոյի բոլոր գործերը

ու քննում էր գաւառական գեմատօյի բողոքները:

Նահանգական ժողովը, բացի ուպրավայից, կարող էր ընտրել իր միջից ձայնաւորներ, որոնց պատուիրում էր կառավարել գեմատօյի գանազան գոյքերը, կատարել ժողովի յանձնարարութիւնները:

Բացի հերթական ժողովներից, կարելի էր կարևոր դէպքերում նշանակել արտակարգ ժողովներ ներքին գործերի միխտարի թոյլատուութեամբ:

Նահանգական գեմատօյի ժողովները տեսչութեան առանձնապէս վերաբերում էին՝ 1) նահանգական գեմատօյի նախահաշիւների և դրամական ու բերքի տուրքերի դասաւորման քննութիւնը ու հաստատութիւնը. 2) թոյլատրել գնել կամ ծախել նահանգական գեմատօյի անշարժ կայուածները. 3) նահանգական գեմատօյի դրամագլուխների վերահասութիւնը. 4) կազմել նոր դրամագլուխներ նահանգական գեմատօյի կարիքների համար. 5) թոյլատրել փոխարինութիւններ անել նահանգի գեմատօյի կարիքների համար կամ փոխառութիւն անել գեմատօյի դրամագլուխներից. 6) գիւղական շաւիղները վերածել նահանգական ճանապարհների կամ ընդհակառակը, նահանգականը՝ գիւղական շաւիղների, փոխել

ճանապարհների ուղղութիւնը. 7) նշանակել նոր տուրքեր նահանգական գեմատօյի կարիքների համար. 8) տուրք նշանակել նահանգական գեմատօյի ճանապարհներով, կամուրջներով անցուղարձ անոցների վրայ. 9) կազմակերպել տեղական բերքերի ցուցահանդէսներ. 10) քննել այն եզրափակութիւնները ու տեղեկութիւնները, որոնք առաջարկվում են կառավարութեան կամ հէնց իրան կառավարութեան պահանջի համաձայն կամ ուպրավայի ու ժողովի միջնորդութեամբ. 11) ներկայացնել կառավարութեան վճարին այն ծրագիրները, որոնք վերաբերում են նահանգական գեմատօյին բանկեր հիմնելուն, նոյնպէս և այն եզրափակութիւնները, որոնք վերաբերում են տեղական առևտրին, հողագործութեան և արդիւնաբերութեան, եթէ այդ ձեռնարկները դուրս են գալիս գեմատօյին վերապահումից և հոլանդական սահմաններից. 12) նահանգական ուպրավային լիազօրութիւններ տալը և ծաղող թիւրիմացութիւնների ու ուրիշ կարևոր ինդիքների լուծումը. 13) նահանգական գեմատօյի ուպրավայի դէմ յարուցած գանգատների քննութիւնը. 14) գեմատօյի անտեսութեան վերաբերեալ հաշիւների հաստատութիւնը. 14) նշանակել տուրքեր առնէտներին և ուրիշ փասակար

կենդանիներին ու միջատներին ոչնչացնե-
համար:

Նահանգական զեմատվոյի ժողովները,
բացի վերոյիշեալից, իրաւունք ունէին հրա-
տարակել ամբողջ նահանգի համար պար-
տադիր կանոններ: Նրանք կարող էին նաև
թոյլատրել ու պրավային կարևոր դէպքերում
նախահաշւից շեղուել ու ժամանակաւոր
փոխառութիւններ անել:

Արանք են 1864 թ. առաջին զեմատ-
վոյի կանոնադրութեան էական գծերը:

Այդ կանոնադրութիւնը ունի այն բո-
ւոր պակասութիւնները, որոնք միշտ յա-
տուկ են չինովիկներէի ձեռքով, առանց
հասարակական ոյժերի մասնակցութեան
մշակած ամեն տեսակ ծրագիրներին:

«Թէև այս նորմուծութիւնը առաջ ե-
կաւ շնորհիւ այն հանգամանքի, որ ժողո-
վրդական տնտեսութիւնը միանգամայն թե-
րի էր կատարվում նախկին դիւանական մի-
ջոցներով» — ասուած է 1864 թ. կանոնա-
դրութեան առիթով մի ամսագրում, — «բայց,
այնուամենայնիւ, ըէֆորմի ներմուծումը
ստիպուած եղան թողնելու նոյն դիւանա-
կան կարգերին. հարկադրուած էին յանձնել
այն մարդկանց, որոնք արդէն ճանաչուել
էին անընդունակ և որոնց փոխարինելու
համար զալիս էին այդ բարենորոգումները»:

Նշանաւոր գրող Ի. Ս. Ակսակովը իր
«ДЕНЬ» լրագում յայտնում էր իր զարման-
քը, որ կառավարութիւնը գործում էր «հա-
սարակութեան աջակցութիւնից դուրս, ա-
ռանց կեանքի օրգանական, ստեղծագործող
օժանդակութեան»:

Եւ անձ շնորհիւ նրան, որ զեմատվոյի
հիմնարկութիւնները չինովիկներէի ձեռքի
գործ էր, շատ շուտով երևան եկան նրանց
թերութիւնները:

Չնայած զեմատվոյի գործիչներէի եռան-
դին, նրանց իրաւական դրութիւնը այնքան
չնչին էր, իսկ վարչութեան ճնշումը ու
խշխանութիւնը այնքան զօրեղ, որ անագին
ջանքեր գործադրելով հանդերձ հանում
էին համեմատաբար աննշան հետևանքներէ:

Ձեմատվոյի ներկայացուցիչները բարձ-
րաձայն յայտնում էին այդ մասին զեմատ-
վոյի ժողովներում, և նրանց բոլորովին հա-
մամիտ էին թէ մամուլի լաւագոյն մասը և
թէ աչքի ընկնող հասարակական գործիչ-
ները:

Բայց միևնոյն ժամանակ գործում էին
և մութ ոյժերը. ճորտութեան կողմնակից-
ները, որոնք չէին կարողանում հաշտուել
ժողովրդի սարկութիւնից ազատուելու հետ,
ձգտում էին ամեն ինչ յետ շրջել, վերա-
դարձնել Ռուսաստանը այն մուսլ ու դա-

դժա ժամանակներին, երբ ստրկացած ազգաբնակիչները կատարում էր լոկ բեռնակիրը ու համր անասունի դեր: Ահա հէնց այդ խաւար ոյժերն էին, որ ոչ միայն արգելք հանդիսացան 1864 թ. գեմատվոյի հիմնարկութիւնների կանոնադրութեան հիմունքների զարգացման, այլ և իրանց նոր կանոնադրութեամբ, որ մտցրուեց 1890 թ. յունիսի 12-ին, բոլորովին խեղդեցին այդ սկզբունքները:

«Այս «նոր կանոնադրութիւնը» ստեղծուած էր մի նպատակով՝ դարձնել գեմատվոն ամբողջովին կազօնի հիմնարկութիւն. այդ կարելի է նկատել հետևեալ փոփոխութիւններից, որոնք մտցրուեցին 1864 թ. կանոնադրութեան մէջ:

Այսպէս, 1890 թ. կանոնադրութիւնը ընդունում է գեմատվոյի հիմնարկութիւնները իբրև պետական հաստատութիւններ և դատավարական գործերում ենթարկում է գեմատվոն այն կանոններին, որոնք գոյութիւն ունին արքունական հաստատութիւնների համար:

Այնուհետև «նոր կանոնադրութիւնը» ուժեղացրեց արմինիստրացիայի հսկողութիւնը գեմատվոյի վրայ. նահանգապետին վերապահուած էր իրաւունք հսկելու գեմատվոյի հիմնարկութիւնների գործողութիւն-

ներին ոչ միայն օրինականութեան, այլ և կանոնաւորութեան տեսակէտից... Նահանգապետին իշխանութիւն էր տրուած ընկիզիայի ենթարկել գեմատվոյի ուպրավաները ու գեմատվոյին ստորադրեալ բոլոր հիմնարկութիւնները, իսկ գեմատվոյի վճիռների ու կարգադրութիւնների օրինականութիւնը ու կանոնաւորութիւնը քննելու համար կազմուած էր մի նոր մարմին, որ կոչվում է՝ գեմատվոյի գործերի նահանգապետի անկումը (губернское по земским деламъ присутствіе):

Ապա 1890 թ. կանոնադրութիւնը գեմատվոյի ժառանգութիւնը դարձրեց պետական ժառանգութիւն ու որոշեց, որ գեմատվոյի ուպրավաների նախագահներն ու անդամները պատասխանատու են վարչութեան առաջ:

Վերջապէս այդ կանոնադրութիւնը ներքին գործերի մինիստրին ու նահանգապետին էր վերապահում գեմատվոյի ժողովների կողմից ընտրուած նախագահներին ու ուպրավայի անդամներին հաստատելու իրաւունքը. միևնոյն ժամանակ ներքին գործերի մինիստրին թոյլ էր տրուած որոշ դէպքերում այդ պաշտօնների համար նշանակել մարդիկ ըստ իր հայեցողութեան:

Սկայն դրանով չը սահմանափակուեց

1890 թ. կանոնադրութիւնը. նա մտցրեց և ուրիշ էական փոփոխութիւններ, բացի այն, որ զեմաստվոյի հիմնարկութիւնները ստորադրեց ադմինիստրացիայի իշխանութեանը:

Այսպէս, օրինակ, ընդ կանոնադրութեամբ՝ սզնոսկասկանները ջոկոտելով կազմեցին առանձին ընտրողական ժողով. նրանց թիւը զեմաստվոյի ժողովներում այնքան մեծացաւ, որ մնացած բոլոր դասակարգերի ձայնաւորները կազմում էին փոքրամասնութիւն: Բացի այդ, զեմաստվոյի ընտրութիւններից բոլորովին հեռացրուած էին հոգևորականորթիւնը, հրէաները ու փոքր բացառութեամբ՝ հաւատարմաթղթով ներկայացուցիչները:

Շնորհիւ այդ բոլոր հանգամանքներին ձայնաւորների ընդհանուր թիւը ժողովներում պակասեց:

Հողատէրերի ու քաղաքացիների համագումար ժողովների փոխարէն, որոնք գոյութիւն ունէին մինչև 1890 թ., նշանակեցին երկու ընտրողական ժողովներ, որոնցից մէկում մասնակցում էին տոնմական ու անձնական ազնուականները, իսկ երկրորդում՝ միւս բոլոր ընտրողները: Գիտական ընտրողական նամագումարները բոլորովին լուծուած էին եւ Արսնց փոխարինել էին

վոջուտի սրտները, միեւնոյն ժամանակ ձայնաւորների առաջուց կազմուած ցանկը հաստատուած էր նամանգաւպետը, որ և որոշում էր մնացեալ ընտրուածների պաշտօնավարութեան հերթը այն դէպքում, եթէ որ մինչև եռամեակի վերջը հաստատուածներից մէկն ու մէկը թողնում էր իր պաշտօնը:

Հետեւեալ թուերը պարզ ցոյց են տալիս, թէ ինչ չափով վնաս կրեց գիւղացիութիւնը 1890 թ. յունիսի 12-ի զեմաստվոյի հիմնարկութիւնների կանոնադրութեամբ:

Այդ կանոնադրութեան համաձայն 30 զեմաստվոյի նահանգներում ձայնաւորների կազմը հետեւեալ կերպով էր ներկայացրուած:

Առաջին ընտրողական ժողովի ներկայացուցիչները, այսինքն՝ տոնմական ու անձնական ազնուականները կազմում էին 57,1⁰/₁₀,

երկրորդինը՝ այսինքն միւս դասակարգերը, բացի գիւղացիութիւնից, — 13,3⁰/₁₀

և գիւղական հասարակութիւններինը՝ 29,6⁰/₁₀:

Համեմատելով այս թուերը այն թուերի հետ, որոնք մենք տեսնում ենք 1890 թ. առաջ՝ նախավերջին եռամեակում, երևում

է, որ ազնուականների թիւը աւելացել է 8%: Ընդհանուր առմամբ նոր կանոնադրութեամբ գիւղացիները կորցրին 2190 տեղ կամ իրանց ներկայացուցիչների թւի 40,9%:

Բացի այդ 1889 թ. հաստատուեցին գեմսկի Աուզաշնիկները, որոնք զրօի հասցրին գիւղացիական ներկայացուցչութիւնը:

Անմիջապէս կախուած չի ներմուծւում այլ չի նույնիկներէից, գիւղացիք քաջ լիով եւն արտաշայտերու իրանց հասցեացքները, մի կողմ թողնելով այն նաւագամակները, որ նախանգաւապետը հաստատուում է գիւղացի անգնատուներին նոյն գեմսկի Աուզաշնիկների ցուցմանից նախանգաւապետը:

Այս բոլոր ասածներից յետոյ թվում է, որ 1864 թ. կանոնադրութեան նոր «փոփոխութիւնների» համար այլ ևս տեղ չէր մնում, որ 1890 թ. կանոնադրութեամբ ամեն ինչ ձեռք էր առնուած կրճատելու գեմստվոյի գործնէութիւնը, բայց ոչ, — «կրճատումները» շարունակվում էին մինչև վերջին ժամանակներս: Զեմստվոյի ձեռքից խլեցին ժողովրդական մատակարարութեան գործը, զրկեցին գեմստվոն ինքն իրան տուրքի ենթարկելու իրաւունքից (право самооблаженія), ահազին խոչընդոտներ առաջ բերին գեմստվոյի գործունէութեան դէմ թէ ժողովրդական կրթութեան, թէ

բժշկական, թէ անասնաբուժական և թէ ուրիշ շատ ասպարէզներում:

Բացի սրանից հարաւարեմտեան նահանգներում (Կիւկի, Պոդոլի, Վոլինի և այլն) մտցրին նոր տեսակ գեմստվո, որ, ըստ երևոյթին, ամենից շատ էր դուր գալիս կառավարութեան:

Այս գեմստվոներում ազգաբնակչութիւնից ընտրուած մարդիկ արդէն չկան. ուղարկվաներում ծառայում են նոյն տեսակ չինովները, ինչպէս և ոստիկանական վարչութիւնների դիւանատներում...

Այսպէս, ուրեմն, ինքնավարութիւնը Ռուսաստանում ոչ միայն չէր զարգանում, այլ ընդհակառակը, աստիճանաբար ընկնում էր և վերջի վերջոյ զրօի հաւասարուեց:

Ընդհանրապէս կարելի է ասել, որ մենք Ռուսաստանում երբէք իսկական գեմստվո չենք ունեցել:

Եւ, արդարև, ինչ է իսկական գեմստվոն:

Զեմստվոն, դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ լայն ինքնավարութիւն, որին պիտի մասնակցի ամբողջ ազգաբնակչութիւնը իր ընտրած ներկայացուցիչների միջոցով:

Առանց ամբողջ ազգաբնակչութեան մասնակցութեան՝ չէ կարող լինել ոչ մի դէպքում իսկական գեմստվո:

Չէ որ չկայ մի մարդ, որ կապուած չը լինէր որևէ տերրիտորեայի հետ, լինի դա քաղաք թէ աւան, գիւղ թէ ագարակ:

Իսկ եթէ իւրաքանչիւր անհատ կապուած է որևէ տերրիտորեայի հետ, անկարելի է երևակայել, որ օտար լինէին նրան «տեղական կարիքները ու շահերը», ինչպէս ասում է «գեմատվոյի հիմնարկութիւններէ կանոնադրութիւնը»:

Վերցնենք մի փոքրիկ օրինակ առօրեայ կեանքից:

Ենթադրենք, որ գետի վրայով կամուրջ չէ անցկացրած, հետևաբար մարդիկ ստիպուած են անցնելու գետի ծանծաղուտ տեղով:

Հարկ կայ, արգեօք, ապացուցանելու, որ մի այդպիսի կամուրջի շինութեան մէջ շահագրգռուած են թէ հարուստները և թէ աղքատները, թէ ականաւոր և թէ աննշան մարդիկ, թէ քրիստոնեաները և թէ ոչ քրիստոնեաները:

Հետևաբար, եթէ գեմատվոյին չէ մասնակցում նոյն իսկ մի հոգի, նշանակում է արգէն, որ մէկի շահերը խաղաղուած են, մէկի ձայնը անլուր է մնացել, և ո՞վ գիտէ, թերևս, հէնց նա կարտայայտէր ամենաբանաւոր դատողութիւնը:

Եթէ ինքնավարութեան վրայ նայելու

լինենք այս տեսակէտից՝ Ռուսաստանում, կրկնում ենք, իսկական գեմատվօ երբէք չէ եղել:

Ինչպէս մենք տեսանք, 1864 թ. գեմատվային կանոնադրութիւնը, — եթէ կարելի է այսպէս ասել — գեմատվոյի անյաջող նմանողութիւն էր:

Բաւական է յիշել, որ այդ կանոնադրութեան համաձայն գաւառական հողատէրերի համագումարին կարող էին մասնակցել միայն նրանք, ովքեր միջին հաշուով ունէին ոչ պակաս քան 200 դեսետաին հող կամ որոնց զոյքը գնահատվում էր 15000 ռուբլի կամ որոնց արդիւնաբերութեան ընդհանուր եկամուտը հասնում էր 6000 ռուբլու. բաւական է միայն յիշել այդ ամենք, որպէսզի չը մնայ ոչ մի տարակուսանք, որ 1864 թ. կանոնադրութեան մէջ խօսք անգամ չկար լսելու ազգաբնակչութեան գեմատվոյին մասնակցելու մասին:

Իայց այդ տեսակ գեմատվօն էլ հազիւ հազ կարողացաւ միայն 25 տարի պահպանել իր գոյութիւնը:

1890 թ. յունիսի 12-ի նոր կանոնադրութիւնը դարձրեց գեմատվօն բուն դասակարգային, գլխաւորապէս, ազնուականների հիմնարկութիւն, միևնոյն ժամանակ նահանգական ու գաւառական ուսրաւանները դար-

ձրել էր գիւանատներ, ամբողջովին ենթարկուած Խորհրդային, որ և հաստատում էր միայն իրան հաճոյ նախագահներին ու անդամներին:

Վերջապէս, ինչպէս մենք տեսանք, հարաւարեմտեան նահանգներում մտցրուած էին «գեմստօններ», որոնք ոչ այլ ինչ էին, եթէ ոչ ինքնավարութեան չարախնդիր ծաղր:

Ռոյոր ասածներէից պարզ է, որ Ռուսաստանը իր գոյութեան ամբողջ ընթացքում երբէք չի ունեցել իսկական ինքնավարութիւն. ընդհակառակը, նկատվում է մի այլ երևոյթ, որ անկարելի է երևակայել մի ուրիշ քաղաքակիրթ եւրոպական երկրում: Այն է՝ մենք տեսնում ենք, որ մեր հայրենիքում ինքնավարութիւնը ոչ թէ առաջ էր գնում, այլ յետադիմում էր:

Ինչո՞վ բացատրել այս տարօրինակ երևոյթը:

Մեզ թվում է, որ պատասխանը չափազանց պարզ է, որովհետև այս երևոյթի մէջ իրապէս ոչ մի տարօրինակ բան չկայ:

Ընդհակառակը, զարմանալի կը լինէր, եթէ որ ինքնավարութիւնը մեզ մօտ յառաջադիմէր: Չէ որ մեր պետութեան կազմը բուն բիւրօկրատիական է կամ չինովիկական, իսկ երբ իշխում են չինովիկները,

այնտեղ բոլորովին անհնարին է ինքնավարութիւնը, որովհետև վերջինս սահմանափակում է նրանց կամայականութիւնը, իսկ այս հանգամանքը չինովիկները համար խիստ անհաճելի է ու անշահաւէտ:

Տեղական լայն ինքնավարութիւնը կարող է զարգանալ միմիայն համապատասխան ընդհանուր պայմաններում, ինչպէս օրգանական մասը մի ամբողջութեան, որ հիմնուած է նոյն ինքնավարական սկզբունքի վրայ:

Պարզ է, որ ինչպիսի գեմստօնային բեֆորմներ էլ չը ծրագրուեն, նրանք գնալու են նոյն թեքհարթութեամբ դէպի անկումն, ինչպէս գնացել են և մինչև մեր ժամանակները, քանի որ պետական ամբողջ կազմը չի բարեփոխուի ինքնավար սկզբունքների:

Այս տեսակ հայեացքի հետ համամիտ են լաւագոյն գեմստօնային գործիչները:

Ահա օրինակի համար ինչ էր գրում վերջին ժամանակներս գեմստօնային մի ակահաւոր գործիչ.

«Ռուսաստանի ամբողջ ներքին կացութեան ամենաբնորոշ գիծն է՝ կառավարութեան ու հասարակութեան կատարեալ անջատումը ու փոխադարձ վստահութեան բացակայութիւնը: Իրերի այս դրութիւնը

ստեղծվում էր երկար ժամանակուայ ընթացքում զանազան հանգամանքներից պայմանաւորուած, բայց այժմ դա զգացվում է աւելի ուժգին: Մի կողմից վերջին տարիների ընթացքում աւելի խիստ արտայայտուեցին կառավարութեան գործողութիւնները, որոնք աւելի զօրացրին այդ անշատումը, միւս կողմից՝ ծանր ու դժուարին պայմանները, որոնց մէջ ընկաւ Ռուսաստանը հեռաւոր արևելքի պատերազմի պատճառով, աւելի ակնայայտի կերպով բաց արին մեր ներքին ախտերը: Եւ այժմ, անտարակոյս, հասել է ժամը մտածելու ու խօսելու այդ տմբողջովին պարզուած ցաւերը բուժելու մասին. անկասկած, ժամանակը հասել է գործելու, որպէս զի հեռացնելք պարզուած չարիքները:

Իբրև մի ընդհանուր կանոն կարելի է ասել, որ կառավարութիւնը մեր ներկայ պայմաններում հնարաւորութիւն չունի իմանալու ժողովրդի և նոյն իսկ նրա որևէ խաւի կամ դասակարգի իսկական, ոէալ ու ժամանակակից պահանջները, նրա կարիքները ու ցանկութիւնները. նա ստիպուած է գործելու ժողովրդի ընդհանուր բարօրութեան մասին ունեցած վերացական հասկացողութեան հիման վրայ, կամ թէ ղեկավարուելու հասարակակն աշահերի ու կարիքների

մասին ստացած պատահական տեղեկութիւններով, իսկ դրանք յաճախ գալիս են անվստահելի աղբիւրներից: Կառավարութեան ու ժողովրդի այդպիսի փոխադարձ յարաբերութիւնները խիստ վնասակար կերպով են ազդում ամբողջ երկրի շահերի վրայ, որովհետև կառավարութիւնը, ունենալով նոյնիսկ ամենաբարի ցանկութիւններ, բայց անտեղեակ լինելով ժողովրդի կացութեան իրական պայմաններին, տալիս է իր ձեռնարկներին սխալ ուղղութիւն, ինչու և երկրի կարևոր հասարակական կարիքները բաւարարութիւն չեն ստանում տարիների ընթացքում:

Գործող կարգերի հիման վրայ ստեղծուած յարաբերութիւնները մշտական ամբարսնողում են կառավարութեան երկիւղը հասարակական գործնէութեան զարգացումից, բերում հասցնում են այնտեղ, որ կառավարութիւնը իսպառ հեռացնում է հասարակութիւնը ներքին պետական վարչութեան որևէ մասնակցութիւնից: Հասարակական ինքնագործնէութեան տեղ մեզ մօտ զարգացել է վարչական կենտրոնացումը, իսկ փոխանակ հասարակական տարրերի մասնակցութեան վարչական գործում՝ ստեղծուել է մի խիտ խնամակալութիւն հասարակական կեանքի բոլոր կողմերի վրայ:

Չափագանց ամրապնդուած բիւրօկրատիական կազմը միշտ նախանձախնդրութեամբ հեռացրել է հասարակական նախաձեռնութեան, հասարակական մտքի ամեն մի արտայայտութիւն և այդպիսով նպաստաւոր հող է ստեղծել ազմինիստրացիայի կամայականութեան ու աճնական քմահաճոյքի համար:

Հարկ չկայ այստեղ առաջ բերելու առանձին օրինակներ, մասնաւոր մանրամասնութիւններ. բաւական է միայն մատնանիշ անել ընդհանուր բնաւորութիւն ունեցող երևոյթները ու ձեռնարկները: Յայտնի է, թէ որպիսի լիազօրութիւններ է ստանում ազմինիստրացիան այն տեղերում, որտեղ մտցնվում են սաստկացրած դրութեան կանոնները. յայտնի է նոյնպէս, որ այդ հանգամանքը ստեղծում է խիստ նպաստաւոր հող անսպասախանատու կամայականութեան համար, և այն ձեռնարկները, որոնք ըստ իրանց գաղափարի պետական ապահովութեան համար են նշանակուած, գործադրվում են անխտիր նաև այն դէպքերում, որոնք չունին ո՛չ մի քաղաքական նշանակութիւն. բայց և այն դէպքերում, որտեղ խնդիրը վերաբերում է քաղաքական բնաւորութիւն ունեցող յանցանքներին, թագաւորում է կատարեալ կամայականութիւն թէ յանցա-

նքը որոշելու և թէ յանցաւորին այս կամ այն պատիժը նշանակելու վերաբերմամբ:

Սաստկացրած դրութեան կանոնները, որոնք մատնում են որոշ տեղի ամբողջ ազգաբնակչութիւնը անսպաշտպան վիճակի, ինքը օրէնսդիրը ընդունում է այնքան աննօրմալ մի երևոյթ, որ արգելում է մտցնել մի տարուց աւել ժամանակով, բայց այս գիշումը արդարութեան ու կարգի գաղափարին ունի միայն վիրացական նշանակութիւն, որովհետև սաստկացրած դրութեան կանոնների գործադրութիւնը տարէ ց' տարի նորոգվում է միևնոյն տեղերում, միաժամանակ դրանց հետ միացնում են նաև նոր տեղեր: Բացի այդ, համաձայն սաստկացրած դրութեան կանոններին, այս կամ այն իրաւունքները տրվում են այնպիսի տեղերի տարածքները, որոնք չեն յայտարարուած այդ կանոնների ներգործութեան ենթակայ, այնպէս որ յատկապէս վարչութիւնը զինելու այդ գործը, որ առաջ է գալիս միայն բացառիկ դէպքերում, դառնում է փոքր աւ փոքր նոյն իսկ սովորական սլայմաններում ընդհանուր երևոյթ: Դրա հետ միասին ազմինիստրացիայի իշխանութիւնը զօրանում է որոշ նահանգում և այդպիսով տեղական ինքնավար մարմինները ենթարկվում են բիւրօկրատիական կամայականութեան հետզհետէ

ածող ու բարդուող ազդեցութեանը: Այս բոլորը դեռ բաւարար չէ համարվում, ուղղակի հարց է դնվում, թէ անհրաժեշտ է լի գորացնել նահանգապետի իշխանութիւնը, թէև այժմ էլ իրկանութիւնը լի է ազմի-նիստրացիայի կամակայութեան բազմաթիւ փաստերով նոյն իսկ այնպիսի տեղերում, որտեղ չէ յայտարարուած սաստկացրած դրուժիւն:

Իրերի այն դրութիւնը, որը այժմ ամենքը ցաւով զգում են, ունի կրկնակի նշանակութիւն: Այդ դրութիւնը ծանր է ազդում մասնաւոր, անհատական ամբողջ կեանքի վրայ. չկայ որևէ վստահութիւն, որ իւրաքանչիւր անհատի օրինական իրաւունքները խստիւ կը պահպանուին. միևնոյն ժամանակ դա քայքայիչ կերպով է ազդում հասարակական կեանքի և նրա բոլոր արտայայտութիւնների վրայ: Գոյութիւն ունեցող բիւրօկրատիական կազմի այդ հետևանքները գտնվում են փոխադարձ կապակցութեան մէջ. առանց անհատի իրաւունքների անհրաժեշտ պաշտպանութեան չէ կարող լինել նաև լուրջ հասարակական նախաձեռնութիւն, ոչ էլ կանոնաւոր դրուած հասարակական ինքնագործնէութիւն: Շատ բան կարելի էր ասել մասնաւոր կացութեան պահանջների ու իրաւունքների, ան-

հատական նախաձեռնութիւնը ճնշող ու ստորացնող կապանքներից ազատելու անհրաժեշտութեան մասին յանուն այդ կացութեան բոլոր կողմերի զարգացման, բայց այստեղ մասնանիշ կանենք միայն անհատի ու նրա արժանաւորութիւնը պահպանելու այնպիսի հիմնական պահանջների վրայ, առանց որոնց անկարելի է որևէ հասարակական գործնէութեան կանոնաւորումը:

Խղճի, խօսքի ու մամուլի ազատութեան բացակայութիւնը հանդիսանում է նոյնքան կառավարութեան ու հասարակութեան անջատման պատճառը, որքան և հետևանք մեր ժողովրդից օտարացած վարչական սիստէմի: Անհամբերատարութիւնը դէպի ժողովրդի կրօնական համոզմունքների արտայայտութիւնը, պետական ու հասարակական գործերի մասին բացարձակ ու անկեղծօրէն խօսելու արգելքը՝ կազմում են այն մեծագոյն զրկանքը ու ճնշումը, որոնց խոր դառնութիւնը ներկայումս գիտակցում են ոչ միայն հասարակութեան կրթուած խաւերը, այլ և ազգաբնակչութեան մասունք: Հասկանալի է, որ այդ գիտակցութիւնը սուր կերպարանք է սուլիս հասարակական դժգոհութեան: Իսկ կառավարութեան համար կրօնի ու խօսքի ազատութեան բացակայութիւնը կազմում է ամենաէական խո-

չընդոտաներից մէկը, որ արգելում է համակերպելու նրա գործնէութիւնը պետութեան իրական կարիքների ու պահանջների հետ և, հետևաբար, տանում է նրան դէպի անշատումը հասարակութիւնից: Ամբողջ երկրի համար այս հանգամանքը պատճառ է հանդիսանում նրա քաղաքական, կուլտուրական ու սնտեսական ոյժերի քրոնիկական տկարութեան ու թուլութեան: Բայց միև կողմից ժողովրդի հոգեկան շահերի՝ կրօնի, խօսքի ու մամուլի ճնշման քաղաքականութիւնը դառնում է բիւրօկրատիական սիստէմի անխուսափելի ուղղեկիցը: Չը ճանաչելով երկրի կարիքները և այդ պատճառով հանդիպելով միշտ հակասութիւնների կեանքի պահանջների հետ՝ ինքնիշխան բիւրօկրատիան՝ ինչպէս նա հանդիսանում է մեզ մօտ, զրկուած է որևէ բարոյական ոյժից իր հեղինակութիւնը և, թերևս, երբեմն նաև արտաքին պետական կարգը պահպանելու համար. նա չունի, բացի հրամանից ու հարկադրութիւնից, ուրիշ ոչ մի գէնք այն դէպքում, երբ նրա վճիռները անխուսափելի կերպով ընդհարվում են իրերի բնական ընթացքի հետ: Այդ գէնքը սկզբում գործադրվում է մասնաւոր դէպքերում, բայց ժամանակի ընթացքում դառնում է բոլոր այլ կերպ մտածողների դէմ, և երբ անհնարին

է լինում ճնշել միտքը, հպատակել համոզմունքի ոյժը, այդ դէպքում խեղդվում են խօսքը ու առհասարակ մտքի, համոզմունքի ու դաւանանքի արտայայտութեան բոլոր միջոցները, իսկ այդ հանգամանքը բերում է զոհեր, կորուստ ու անվերջ մարտիրոսութիւններ...

Առհասարակ անհատական իրաւունքների ընդհանուր անապահովութիւնը ու ագմինիստրացիայի մեծ հնարաւորութիւնը կամայականօրէն վարուել անհատի հետ՝ նոյնպէս անխուսափելի ուղղեկիցներ են բիւրօկրատիական ուժիմի, որը ըստ էութեան ոչ այլ ինչ է, եթէ ոչ կազմակերպուած վարչական կամայականութիւն պետական վարչութեան բոլոր ճիւղերում: Ագմինիստրացիայի գերիշխանութիւնը թէ պետական և թէ հասարակական խնդիրներում նոյն իսկ այնտեղ, որտեղ օրէնքը չէ թոյլատրում քաղաքացու վերաբերմամբ կամայականութիւն գործ դնել, այնուամենայնիւ փաստօրէն դառնում է կամայականութիւն անհատի վերաբերմամբ, որովհետև միայն հիմնարկութիւնների որոշ կազմն է երաշխաւորում քաղաքացիական իրաւունքների անձեռնմխելիութիւնը: Պետական կարգը ու մասնաւոր անձանց իրաւունքների պաշտպանութեան համար ան-

հրաժեշտ պայմաններից մէկն էլ, ի միջի այլոց, հանդիսանում է անկախ դատարանը, այդ պատճառով էլ դատարանի կանոնաւոր կազմակերպութիւնը ու նրա ազմինիստրացիայից անկախ գիրքը՝ կազմում են թէ պետութեան ստիպողական պահանջը և թէ անհատի քաղաքացիական իրաւունքների անձեռնմխելիութեան հիմնաքարը:

Այսպէս, ուրեմն, անհրաժեշտ են հետևեալ պայմանները՝ 1) խղճի ազատութիւնը. դաւանանքի ու կրօնական համոզմունքների համար հալածանքների կատարեալ վերացումը. 2) խօսքի ազատութիւնը ու 3) մամուլի ազատութիւնը:

Այս երեք հիմնական սկզբունքների վրայ անհրաժեշտ է աւելացնել էլի երկու ուրիշ սկզբունք, որ նոյնպէս անհրաժեշտ է ընդունել իբրև հիմնական պահանջներ՝ 4) առանց դատաստանական վճռի չկայ պատասխանատվութիւն, չկայ իրաւունքների սահմանափակումն և 5) այդ վճիռը պիտի արտասանի *անկախ* դատարանը:

Առանց այդ սկզբունքների իրական գործադրութեան, որոնք անհրաժեշտ են թէ անհատի և թէ հասարակութեան ապահովութեան համար,—անկարելի է ներկայ կարգերի փոփոխութիւնը, պետութեան ու հասարակութեան մէջ կենդանի կապ հաս-

տատելը, անկարելի է երկրում առաջ բերել լիակատար համերաշխութիւն:

Ի հարկէ, երբ խօսվում է, թէ անհրաժեշտ է յայտարարել մարդկային անձնաւորութեան ընդհանուր իրաւունքները, պէտք է հասկանալ այն՝ որ ներկայումս գոյութիւն ունեցող իրաւական անհաւասարութիւնը կ'ոչնչացուի, որ գիւղացու անհատականութիւնը, որը նոր է ազատուել մարմնական անարգ պատժից, կազատուի և ազմինիստրացիայի ճնշող խնամակալութիւնից, որ գիւղական ինքնավարութիւնը դրուած կը լինի իշխանութեան քմհած միջամտութիւնից անկախ հողի վրայ, որ գիւղացիների շահերը ապահովուած կը լինեն կանոնաւոր կազմակերպուած դատարանով:

Ինչ վերաբերում է յատկապէս գեմտավոյի ինքնավարութեան, նրա բեղմնաւոր գործնէութեան, նրա լիակատար զարգացման համար, բացի վերոյիշեալ պայմաններից, անհրաժեշտ են նաև՝ 1) *Մօսկոյնէր գեմտալօն ազգաքննչութեան*, *ստեղծելով մանր գեմտալային մարմին* (мелкая земская единица), որը *այնպիսի պայմաններում պիտի դրուած լինի*, որպէս զի *ընդհանուր գեմտալային ինքնախարութեան կազմակերպութեան հետ միասին արև տրուած լինի ինքնագործնէութեան իրա-*

կան հնարաւորութիւն. 2) փոփոխել զեւստւոյի ընտրողական սխառեմը, մտնելով ո՛չ միայն բոլոր դասակարգերի մասնակցութեան սկզբունքը, այլ եւ նպատակ դնելով զեւստւոյի գործնէութեան քաջչառ տեղական ազգարնակութեան ըստ կարելոյն բոլոր ձեռքի տակ գտնելոյ ոյժերը. 3) տայ զեւստւոյի հիմնարկութիւններին այնչափ ինքնորոշութիւն, որ աղմիստրացիան իրաւունք ունենար հսկելոյ զեւստւոյի վճիռներին ու գործողութիւններին միայն օրինակականութեան տեսակետից, բայց երբեք ինքնակամ միջամտելոյ գործերի ընթացքին. 4) վերջապէս, զեւստւոյի գործնէութեան համար պիտի ապահովել կարուն վիճակ:

Զը խօսելով այստեղ այդ խնդրի մանրամասնութիւնները վրայ, մենք կասենք միայն հետեւեալը. զեւստւոյի հիմնարկութիւնները գործող կանոնադրութիւնը պէտք է ենթարկուի արմատական վերաքննութեան ու փոփոխութիւնները, բայց և այնպէս չէ կարելի մատնանիշ չանել զեւստւոյի գործնէութեան մի ճիւղի վրայ, այն է՝ ժողովրդական լուսաւորութեան գործը վրայ: Պետական կեանքի կանոնաւոր ընթացքը հասարակը է միայն այն ժամանակ, երբ ազգաբնակչութեան մէջ տարածուած է լուսաւո-

րութիւն, թէ տեղական ինքնավարութեան և թէ ընդհանուր քաղաքական կեանքի շահերը կախուած են նրանից, թէ որքան կանոնաւոր հիմունքների վրայ է դրուած ուսումնարանական գործը: Անհրաժեշտ է, որպէս զի հասարակութեան իրաւունքները այդ սուպրեզոստ ատանան շայն ծառայորպէս զի նրան վերապահուած շինի ոչ միայն ժողովրդական կրթութեան նիւթական միջոցների մասին հոգատարութիւնը, այլ եւ դպրոցների իրական վերահաստատութիւնը, նոյնպէս եւ որպէս զի դպրոցը նւթակայ շինե հասարակական տարրերի առելի մեծ ազդեցութեան:

Ահա, ուրեմն, այն ընդհանուր սկզբունքները, որոնց իրագործուելովը միայն ներկայ ուսական կեանքը դուրս կը գայ իր տիտուր դրութիւնից. դրանք են՝ գիւղացիութեան ու զեւստւոյի կանոնադրութիւնների բարեփոխումը, խղճի, խօսքի, մամուլի ազատութիւնը, պատժի նշանակելը միայն դատարանական վճռով ու դատարանի անկախութիւնը: Սակայն սխալ կը լինէր կարծել, որ կարելի է սահմանափակուել միայն այդ միջոցներով, նոյն իսկ եթէ ի նկատի առնելու լինենք միայն տեղական ինքնավարութեան շահերը: Զեւստւոյի գործնէութիւնը կարող է ստանալ օրէնքով


ինքնուրոյնութիւնն ու մեծ ծաւալ, բայց
ինչպէ՞ս տալ նրան անհրաժեշտ կայուն վի-
ճակ. ինչպէ՞ս ապահովել այն անհատական
ու հասարակական իրաւունքների պահպա-
նութիւնը, որոնց անհրաժեշտութիւնը վերը
շեշտուած է:

Կայ մի շատ կարեւոր ու անհրաժեշտ
պայման, առանց որի իրագործութեան բո-
լոր միւս պայմանները կորցնում են իրանց
ոյժը ու նշանակութիւնը: Անպայման ան-
հրաժեշտ է ժողովրդական ընտրովի Անր-
կայացոռօցչութեան մասնակցութիւնը օ-
րենսդրութեան մեջ: Առանց այս հանգա-
մանքի չեն կարող ապահով ու կայուն լի-
նել վերեւ յիշուած անհատական ու հասա-
րակական իրաւունքները. դրանց համար
այս վերջին պայմանը անհրաժեշտ հիմք է ու
անհրաժեշտ գրաւական: Միայն ժողովր-
դական ներկայացուցչութեան մասնակցու-
թիւնը օրէնսդրութեան կարող է ապահովել
պետական իշխանութեան ու հասարակու-
թեան փոխադարձ վստահութիւնը ու համե-
րաշխութիւնը. նա միայն կարող է յաջոր-
դականութիւն տալ օրէնսդրական աշխա-
տանքին, ապահովել նրա լուրջ բեղմնա-
ւորութիւնը, կատարեալ նպատակայար-
մարութիւնը ու համապատասխանութիւ-
նը երկրի իրական շահերին: Անհրա-

ժեշտ է, որպէս զի օրէնսդրական գործը
այսուհետեւ չը մնայ ամբողջովին բիւրօկրա-
տիայի ձեռքին, որպէս զի հասարակութիւ-
նը ի դէմս իր ընտրովի ներկայացուցիչների
մասնակցէ և հոգայ, որպէս զի պետական
կարգը ու ժողովրդական բարեկեցութիւնը
գնուեն օրէնքի ամուր հիմքերի վրայ, որոնք
պիտի լինին ոչ միայն կայուն ու որոշ,
այլ և կենսունակ, այսինքն համապատաս-
խանէին իրաւունքի, ճշմարտութեան ու
արդարութեան ժամանակակից հասկացողու-
թիւններին:



Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



«Ազգային գրադարան»



NL0219632

40. 278

წიგნი № 10 ყ.

წიგნი ტიფლის, Городская Управа
Иосифу Тадевосянцъ.